

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/11

2 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Սայդինգ Գրուպ» ՍՊԸ 12.11.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 27.11.2014 թ-ի թիվ 6100485 ստուգման ակտի դեմ:

#### «Սայդինգ գրուպ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարության Արաբկիրի ՀՏ պետի 08.09.2014 թ-ի հանձնարարագրով «Սայդինգ Գրուպ» ՍՊ ընկերությունում ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմինն վերապահված իրավասությունների սահմաններում ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: 20.10.2014 թ-ին կազմվել է թիվ 6100485 ակտի նախագիծը, որով արձանագրվել է, որ ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված թվով 5 (հինգ) աշխատակիցների Հրանտ Մովսիսյանի, Մկրտիչ Բարոյանի, Անահիտ Աղաջանյանի, Անի Մելոյանի և Արթուր Իսաիրյանի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէ, բացակայում են գրավոր աշխատանքային պայմանագրերը և (կամ) աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը: Համաձայն «Պարդադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի, ակտի նախագծով ընկերությանն առաջադրվել է լրացուցիչ վճարել 750.000 դրամ սոցիալական վճարի գումար:

29.10.2014 թ-ին թիվ 6100485 ակտի նախագծի վերաբերյալ Արաբկիրի ՀՏ են ներկայացվել առարկություններ և կից փաստաթղթերի լուսապատճենները, սակայն նույն օրը փոստով ստացվել է 6100485 ակտը կազմված 27.10.2014 թ-ի ամսաթվով, որում ամբողջովին արտացոլված է նախագծի բովանդակությունը: Նշված ակտի նախագիծը ստացվել է փոստով 23.10.2014 թ-ին, ինչի մասին է վկայում ծրարի վրա եղած փոստային նշումը, իսկ ակտը փաստորեն կազմվել է երկու աշխատանքային օր հետո 27.10.2014 թ-ին (նկատի ունենալով, որ 2014 թ-ի հոկտեմբերի 25-ը և 26-ը ոչ աշխատանքային օրեր են), որով ընկերությունը զրկվել է ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու օրենքով սահմանված իրավունքից: Այսինքն, խախտվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ պարբերությունների պահանջները: Բացի այդ, ստուգման ընթացքում ստուգող տեսուչներին հայտնվել է, որ ակտում նշված աշխատակիցների հետ 2012 թ-ի հուլիս ամսին կնքվել են գրավոր պայմանագրեր 1-ամսյա ժամկետով, որոնք չեն պահպանվել, սակայն դրանց լուսապատճենները 2012 թ-ից գտնվում են ՀՀ մշակույթի նախարարությունում, քանի որ կատարված աշխատանքների ֆինանսավորումը կատարվել է վերջինիս կողմից, որի պահանջով այդ աշխատանքներին առնչվող բոլոր փաստաթղթերի (ներառյալ աշխատանքային պայմանագրերի) լուսապատճենները 2012 թ-ին ներկայացվել են ՀՀ մշակույթի նախարարություն:

Ակտում նշված բոլոր աշխատակիցների ստացած եկամուտները ներառվել են 2012 թ-ի հուլիս ամսվա «Սայդինգ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից հարկային տեսչություն ներկայացված եկամտահարկի և սոցիալական ապահովության վճարների

հաշվետվություններում և դրանցից առաջացած հարկերը և սոցիալական ապահովության վճարներն ամբողջովին վճարվել են: Այսինքն, խախտվել է նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջը, այն է՝ «Հարկվող միևնույն օբյեկտը հաշվետու ժամանակաշրջանում նույն տեսակի հարկով կարող է հարկվել միայն մեկ անգամ»: Բացի այդ, խախտվել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի պահանջները, այն է՝ «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Վերոգրյալի հիման վրա ընկերությունը խնդրում է վերանայել Արաբկիրի ՀՏ 27.10.2014 թ-ի թիվ 6100485 ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 08.09.2014 թ-ի թիվ 6100485 հանձնարարագրի համաձայն «Սայդինգ Գրուպ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմինն վերապահված իրավասության սահմաններում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում: Արդյունքում 20.10.2014 թ-ին կազմվել է թիվ 6100485 ակտի նախագիծը, իսկ 27.10.2014 թ-ին՝ թիվ 6100485 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված վարձու աշխատողներից թվով 5 (հինգ) աշխատակիցների՝ Հրանտ Մովսիսյանի, Մկրտիչ Բարոյանի, Անահիտ Աղաջանյանի, Անի Մելոյանի և Արթուր Իսախրյանի հետ աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէ, բացակայում են գրավոր աշխատանքային պայմանագրերը և (կամ) աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը: Նշված հանգամանքը հիմնավորվել է ընկերության տնօրեն Թովմաս Բադալյանի կողմից տրված հայտարարությունների և ընկերությունում առկա 2012 թ-ի հուլիս ամսվա աշխատավարձի վճարային տեղեկագրի հիման վրա: Նշվածը դիտվել է որպես ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 14-րդ հոդվածի 1-ին կետի, 83-րդ հոդվածի և 84-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում և հիմք ընդունելով «Պարզադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները ստուգման ակտով գանձման է առաջադրվել ընդամենը 750.000 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ՀՀ մշակույթի նախարարության (Պատվիրատու) և «Նունե Եսայան» բարեգործական հասարակական կազմակերպության (Կատարող) միջև 27.04.2012 թ-ին կնքված թիվ 180 պայմանագրի համաձայն, Կատարողը ստանձնել է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել ՀԽՍՀ ժողովրդական արտիստ կոմպոզիտոր Արտեմի Այվազյանի ծննդյան 110-ամյակին նվիրված «Ժամանակին Երևանում» վերնագրով ձայնասկավառակի երգերի հիման վրա «Հիշում ես դու» տեսաֆիլմի պատրաստման աշխատանքների իրականացումը: Այնուհետև, «Նունե Եսայան» բարեգործական հասարակական կազմակերպության և «Սայդինգ Գրուպ» ՍՊԸ միջև 01.05.2012 թ-ին կնքվել է ծառայությունների մատուցման թիվ 01/12 պայմանագիրը, որի համաձայն «Սայդինգ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է իրականացնել է «Հիշում ես դու» տեսաֆիլմի նկարահանումը:

Տեսաֆիլմի նկարահանման աշխատանքների կազմակերպման համար «Սայդինգ Գրուպ» ՍՊԸ և ստուգման ակտում հիշատակված անձանց միջև 01.07.2012 թ-ին կնքվել են

աշխատանքային պայմանագրեր, որոնց օրինակներն ընկերությունում չպահպանվելու հետևանքով դրանք չեն ներկայացվել ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց:

Արդյունքում, հիմք ընդունելով ընկերության կողմից 2012 թ-ի հուլիս ամսվա աշխատավարձի վճարային տեղեկագրում ստուգման ակտում հիշատակված անձանց վերաբերյալ արտացոլված տվյալները, ինչպես նաև ընկերության տնօրենի ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց տրված հայտարարությունները՝ ստուգվող ժամանակաշրջանում աշխատանքային պայմանագրեր կնքված չլինելու վերաբերյալ, ստուգման ակտի 1-ին կետով սոցիալական ապահովության վճարի գծով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսաֆիլմի նկարահումն իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության պատվերով և այդ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև՝ վերոգրյալ աշխատանքային պայմանագրերի օրինակները ներկայացվել են ՀՀ մշակույթի նախարարություն, ընկերությունը գրությամբ դիմել է վերջինիս վերոգրյալ աշխատանքային պայմանագրերի օրինակները ստանալու համար: ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավարի 06.11.2014 թ-ի թիվ 02/6.1/5488-14 գրությամբ «Սայդինգ Գրուպ» ՍՊԸ-ին են ուղարկվել պահանջված աշխատանքային պայմանագրերի պատճենները:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ մշակույթի նախարարության կողմից տրամադրված աշխատանքային պայմանագրերի պատճեններն արձանագրեց, որ դրանց առկայության հանգամանքը վկայում է այն մասին, որ ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտումները, ըստ էության, չեն համապատասխանում իրականությանը:

Ինչ վերաբերվում է ստուգման ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու հնարավորություն չընձեռելու վերաբերյալ գանգատում բերված փաստարկներին, ապա այդ կապակցությամբ նշվեց հետևյալը:

Թիվ 6100485 ակտի նախագիծը կազմվել է 20.10.2014 թ-ին, որի օրինակը պատվիրված նամակով ընկերությանն է ուղարկվել 21.10.2014 թ-ին: Համաձայն գանգատին կից ներկայացված ապացույցների, ընկերությունն ակտի նախագիծը ստացել է 23.10.2014 թ-ին: Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով ընկերությունը իրավունք ուներ 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրել ակտի նախագիծը և դրա հետ համաձայն չլինելու դեպքում ներկայացնել առարկություններ: Սակայն մինչև 5 աշխատանքային օրվա ժամկետի ավարտը, այն է՝ 27.10.2014 թ-ին, կազմվել է ստուգման ակտը: Արդյունքում խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի հետևանքով ընկերությունը զրկվել է ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Հանձնաժողովը եզրակացնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 27.11.2014 թ-ի թիվ 6100485 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.Մ. ԽՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

